

առեմ և անհաշիվ մեծ արտասահմանի հայրենակիցները պետք է ապահով լինեն և պետք է գիտենան, որ մենք ունենք մի շատ մեծ բարեկամ՝ Գեներալխստմուս ՍՏԱԼԻՆԸ, որի հայրական հոգածությամբ արտահայտությունները մեր ժողովրդի հանդեպ անհաշիվ են։ Նրանք կարող են իրենց հույսը դնել նրա վրա»։

Վեհափառ Հայրապետի այս կոչը ջերմ արձագանք գտավ արտասահման վերահարձակող պատգամավորների հայրենակարոտ սրտերում։ Հայ ժողովրդի լավագույն իղձերը կատարված տեսնելով, նրանք հայրենիքից մեկնեցին խանդավառ տրամադրությամբ և հայրենիքին բոլոր ուժերով ծառայելու հաստատված մեծով։

Մեկնելուց նրանք որպես սիմվոլ իրենց հետ քսակներով տարան հայրենի հողից։ Ազգային—եկեղեցական ժողովի պատգամավորները վերադառնալով իրենց տեղերը հայրենասիրական խոշոր աշխատանք ծավալեցին և իրենց գոտեպնդիչ ու ոգեշունչ ճառերով կարողացան Սփյուռքի հայությունը համախմբել և նրանց սեփական հայացքն ուղղել դեպի Մայր-Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը։

Այդ մասին է վկայում խմբագրության կողմից ստորև տեղի սղության պատճառով որոշ կրճատումներով զետեղվող հոդվածաշարը։ Այդ մասին են վկայում նաև ամսագրիս 1945 թ. նոյեմբեր—դեկտեմբեր համարում զետեղված նյութերը։



Պատգամավորները մեկնելուց առաջ հող են վերցնում

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԿԸ ԾԱՎԱԼԻ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵՋ

(Պ. Թերզյանի հոդվածից)

Էջմիածնի Ազգային եկեղեցական Համագումարի պատվիրակներու վերադարձին, Միջին Արևելքի գաղութներուն անոնց այցելությանց միջոցավ ստեղծված ընդհանուր խանդավառությունը, հայրենասիրությունը և համագործակցությունը, այդ ժողովին լավագույն արդյունքներեն մեկն է։ Պատ-

վիրակները, ո՛ւր որ այցելեցին՝ հայրենաբաղձ Հայությունը խուռներամ և հոծ բազմությամբ լեցվեցավ եկեղեցիները և սրահները։ Անոնք անհազ կարոտով լսեցին և ներշնչվեցան ամեն մեկ բառն և բացատրությունն, որ կը խոսեր Հայաստանի լեռներուն ու դաշտերուն, քա-

դաբներուն և շենքերուն նկատմամբ, երբ գովքը կըլլար անոր ճարտարար-վեստին և մշակութիւն, հոն ապող ըս-տեղծագործ ժողովրդին և հերոս զինվորնե-րուն: Ուկնդիր Հայութիւնը խոսողներու շրթներին կախած մնաց, ամեն մեկ բառի և խոսքի խտեռ ուղեց տեսնել և երևակայել այն բաներն ու երևույթները, որ հաճախ չեն ըսվիր և չեն կրնար բացատրվիլ:

Ստեղծված այս ընդհանուր եռուզեռը և անհաղ հետաքրքրությունը վերաբարձեց հայրենիքի սերը, ներշնչեց երիտասարդու-թյունը և խանդավառեց համայն Հայու-թյունը, բոլորն փափաք և բաղձանք արթ-նցավ վերադառնալու հայրենիք, և՛ տես-նելու, և՛ համբուրելու հայրենի հողը և՛ շնչելու անոր ազատ օդը:

Երկրորդ շատ կարևոր և դրական մեկ արդյունքը եղավ հայաստանյան տարրերու միջև ստեղծել համագործակցություն և հա-մերաշխություն Միջին Արևելքի երկիրներու մեջ:

Արդեն երկու տարիներն ի վեր գոյու-

թյուն ունի համերաշխություն և համագոր-ծակցություն Ամերիկայի մեջ, Ազգային Խորհուրդ անունով, և Ֆրանսիայի ու Պալ-ժանյան երկրներու մեջ Հայաստանյան ճա-կատ անունով: Ամերիկայի Ազգային Խոր-հուրդը իր համերաշխ և ներդաշնակ գոր-ծունեության շնորհիվ մեծագույն ազդակը հղավ Ամերիկահայ կյանքի խաղաղության, և Հայ դատի բերած իր դրական օժանդա-կությամբ որ ի հայտ եկավ Սան Ֆրանչիս-քոյի ժողովին մատուցված հայտարարու-թյունով:

Խիստ օգտալերական է տեսնել այսօր որ պատվիրակներու այցելության և հրապա-րակային արտահայտություններու, անհա-տական տեսակցությանց և խորհրդակցու-թյանց իբր դրական արդյունք մերձեցում և հասկացողություն կը գոյանա հայաս-տանյան այս տարրերուն միջև և ազգային խորհուրդներ կազմված են և կը կազմվին Պարսկաստանի, Սուրիոյ, Լիբանանի, Պա-ղեստինի և այլ գաղութներու մեջ:

(«Աւել» քիվ 8133 1945 թ.)

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՀԱՆՁՆՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ

Անախարհաց և անմոռանալի ցերեկույթ մըն էր, զոր վայելեց Գահիրեի հայ հասա-րակությունը. ցերեկույթ մը, որուն ներկա պիտի ըլլային և խոսք պիտի առնէին, եգիպտահայ պատգամավորներն զատ, Ամերիկայի կրօնական թե աշխարհական պատգամավորները: Ցերեկույթը կը հովա-նավորեր Եգիպտահայոց Առաջնորդ Գեր. Տ. Սամբրե Արքեպս. Սիրուսյան, և անոր կը նախագահեր Եգիպտահայ թեմին պատգա-մավորներն ընկեր էօթեն Բաբազյան:

Ինչպես կալընկալուեր, հանդեսին ներկա էր խուռն և խանդավառ բազմություն մը:

Օրվան նախագահ ընկեր էօթեն Բաբազ-յան ցերեկույթը բացված հռչակեց ժամը 6.50-ին:

Առաջին խոսք առնողը եղավ ընկեր Ծիմ Չանգալյան, որ օրվան խորհուրդը կազմող հողին ակնարկելով, ըսավ թե այսօր՝ երի-տասարդության, իբրև ավանդապահի, պիտի հանձնվի հայրենի մաքուր հողը: Երիտա-սարդության պարտականությունն կիշնա գիտնալ անոր արժեքը և ընդ միշտ անա-ղարտ պանել զայն:

Խոսք կը տրվի Ամերիկայի Արևելյան Թեմին Առաջնորդ Գեր. Տ. Տիրան Նպս. Ներսոյանի, որը շեշտեց թե ներգաղթող Հայերուն կարելիություն պիտի տրվի հոն

արմատ բռնելու, ինչ որ, անտարակույս, մեծապես սփոփաբար իրողություն մըն է մշտահալած և աշխարհի շորս ծագերը ցանցնված Հայության համար: Վերջացուց իր խոսքերը, եզրակացնելով թե այդ օրվան ամենքս ալ կը սպասենք անշուշտ:

Սրբազանն ևս խոսելու կը հրավիրվի Գալիֆորնիո թեմին պաշտօնական պատգա-մավոր ընկեր Առաքել Յազըճյան, որը կար-դաց հողին վերաբերող հույժ շահեկան ինքնագիր գրություն մը:

Խոսք կը արվի Ամերիկայի Արևելյան թեմին մաս կազմող Բրավիտենսի հոգևոր հովիվ Գերշն. Տ. Սիոն Նպս. Մանուկյանի որ, արտահայտվելով իմաստավոր և՛ կշռված խոսքերով, ըսավ— եթե մարդուն առօրին տակ հող պետք է՝ կարենալ կանգուն մեա-լու համար, նույնն է պարագան նաև ազգե-րուն համար: Վաշկատուն, թափառական ազգերը քաղաքակրթություն չունին: Այս հայրենի հողը, որ այսօր երիտասարդու-թյան պիտի հանձնվի, նվիրական և սուրբ է. անհրաժեշտ է մաքուր և անաղարտ պահել զայն: Եթե երեսի վրա ձգենք զայն, հողը պիտի բողոքն անոնց դեմ, որոնք զինք զատեցին իր լմայր-երա-կեն: Ընդհակառակը, երիտասարդությունը որ այսօր պիտի ստանա զայն, պետք է ամեն ժամանակ պատրաստ ըլլա զայն իր